

**ՀՐԱՅՐ ԹՈՎԸՍԱՅԱՆ**

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար- գլխավոր քարտուղար,  
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

**ՎԱՐԴԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

Քաղաքագիտության մագիստրոս,  
ԳՄՀՀ իրավական ծրագրի ղեկավար Հայաստանում

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՀԱՍՏԱԿԵՐԳԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՁԵՎԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ**

Հոդվածում անդրադարձ է կատարվում Արցախի Հանրապետությունում ներկայումս գոյություն ունեցող կառավարման կիսանախագահական համակարգին, խոսվում է դրա հնարավոր վտանգների մասին:

Հեղինակը դիտարկում է խնդրի լուծման 3 տարրերակներ՝

- 1) կիսանախագահական համակարգի հնարավոր բարեփոխումները,
- 2) հնարավոր անցումը կառավարման խորհրդարանական համակարգին,
- 3) անցումը հավասարակշռված նախագահական կառավարման համակարգի:

*Հիմնարարեր – Արցախի Հանրապետություն, կառավարման կիսանախագահական համակարգ, կառավարման խորհրդարանական համակարգ, հավասարակշռված նախագահական կառավարման համակարգ, Հանրապետության Նախագահ, Ազգային ժողով, վարչապետ, կառավարություն:*

Արցախի Հանրապետության Սահմանադրությունը ուղղակիորեն չի սահմանում, թե ինչպիսի կառավարման ձև է գործում Արցախում: Թեպետ պետության անվանման մեջ «Հանրապետություն» բառի առկայությունը արդեն իսկ խոսում է կառավարման հանրապետական ձևի մասին, սակայն հանրապետական կառավարման ձևի որ տարատեսակն է՝ նախագահական, կիսանախագահական, թե պառակնենտական, սահմանված, կարելի է պարզել միայն ԼՂՀ Սահմանադրության 3-րդ՝ «Հանրապետության Նախագահ», 4-րդ՝ «Ազգային ժողով», 5-րդ՝ «Կառավարություն», գլուխմերի համակարգային վերլուծության արդյունքում:

Սահմանադրության այդ գլուխմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ.

1. Հանրապետության Նախագահը պետության գլուխմն է (հոդված 61) և գործադիր իշխանության բնագավառում օժտված է մի շարք կարևոր լիազորություններով (մասնավորապես՝ պաշտպանության և անվտանգության բնագավառներում, արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարում՝ հոդված 61, և այլն).

2. Հանրապետության Նախագահն ընտրվում է ուղղակիորեն՝ քաղաքացիների կողմից (հոդվածներ 4 և 62).

3. Հանրապետության Նախագահն ունի հարաբերական վետոյի իրավունք (հոդված 68.2), որը հաղթահարվում է պատգամավորելի ընդհանուր թվի ճայների մեծամասնությամբ (հոդված 88.2).

4. Հանրապետության Նախագահը նշանա-

կում է վարչապետին: Վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազտում է կառավարության անդամներին (հոդված 68.4).

5. Հանրապետության Նախագահը զինվածութերի գերագույն գլխավոր հրամանատարն է (հոդված 68.13).

6. օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը (հոդված 73.1).

7. Ազգային ժողովը հավանություն է տալիս կառավարության գործունեության ծրագրին, կարող է անվտանգություն հայտնել կառավարությանը (հոդված 89).

8. գործադիր իշխանությունն իրականացնում է Կառավարությունը:

Այդ դրույթների վերլուծությունը վկայում է, որ Արցախի Հանրապետությունում գոյություն ունի կառավարման կիսանախագահական համակարգ, որի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ ժողովուրդն ուղղակի մանդատով օժտում է երկու մարմինների՝ Ազգային ժողովին և Հանրապետության Նախագահին: Սակայն վերջինս, գործադիր իշխանության ոլորտում ունենալով ծանրակշիռ լիազորություններ, այնուամենայնիվ իրավաբանութեն գործադիր իշխանության ղեկավարը չէ և այդ իշխանությունը կիսում է խորհրդարանի առջև պատասխանատու կառավարության հետ:

2006 թվականի ղեկանեմբերի 6-ի Արցախի Հանրապետության Սահմանադրության կառավարման ձևին վերաբերող դրույթներն ընդհանուր գծերով նշանակում են Հայաստանի Հանրապետու-

թյան 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությանը, սակայն Արցախի Հանրապետության Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին կառավարության նկատմամբ ավելի ուժեղ դիրք է վերապահում, քան այն, որը ուներ Հայաստանի Հանրապետության Նախագահը: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, վարչապետին ազատելու Նախագահի լիազորությանը, որը 2005 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո ՀՀ Սահմանադրության մեջ արդեն իսկ բացակայում էր, սակայն առկա է ԼՂՀ սահմանադրության 68-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունում. «Խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և խմբակցությունների դեկավարների հետ՝ ազատում է վարչապետին»: Այս դրույթն անշուշտ մեծացնում է Նախագահի դերը գործադիր իշխանության բնագավառում, սակայն դա բնակ էլ չի երաշխավորում գործադիր իշխանության միասնականությունը և չի բացառում «համակեցության» իրավիճակների առաջացումն ու Նախագահի և պառլամենտական մեծամասնության աջակցությունը վայելող վարչապետի հակադրումը:

Կառավարության ձևավորումը, Արցախի Հանրապետության Սահմանադրության համաձայն, բարդ և երկարատև ընթացակարգ է, որը քաղաքական անհամաձայնությունների դեպքում ավարտվում է Ազգային ժողովի արձակմամբ: Սահմանադրության 68-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հանրապետության Նախագահը Սահմանադրության 100-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակում է վարչապետին, իսկ վերջինիս առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարության մյուս անդամներին»<sup>4</sup>: Հանրապետության Նախագահն իրավունք ունի, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և խմբակցությունների դեկավարների հետ, ազատել վարչապետին: Ըստ Սահմանադրության 100-րդ հոդվածի՝ Հանրապետության նախագահը վարչապետ կարող է նշանակել այն թեկնածուին, որը Ազգային ժողովի պատգամավորների ընթանուր թվի ծայների մեծամասնությամբ արժանացել է խորհրդարանի համաձայնությանը: Եթե Ազգային ժողովը նման համաձայնություն չի տալիս, ապա Հանրապետության Նախագահը երկրորդ անգամ է վարչապետի թեկնածություն առաջարկում Ազգային ժողովի համաձայնությանը, իսկ կրկին մերժման դեպքում նա իրավունք ունի իր հայեցողությամբ նշանակել վարչապետին:

Ցանկացած պարագայում նոր կառավարությունը պետք է իր գործունեության ծրագիրը ներկայացնի Ազգային ժողովի հավանությանը: Եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ հավանություն չի տալիս իր համաձայնությամբ նշանակված կառավարության գործունեության ծրագրին կամ այն կառավարության գործունեության ծրագ-

րին, որի վարչապետը նշանակվել է Հանրապետության Նախագահի հայեցողությամբ, ապա խորհրդարանը պարտադիր կերպով արձակվում է, և նշանակվում է արտահերթ ընտրություն: Այս կարգավորումների եռթյունն այն է, որ կառավարությունը միաժամանակ վայելի Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի մեծամասնության աջակցությունը, ինչը, սակայն, նման արդյունք չի երաշխավորում, ներառյալ՝ այն դեպքում, եթե Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի միջև անհարահարելի հակասություններ առաջանալուց հետո խորհրդարանը լուծարվում է: Հաշվի առնելով այն հանգանակը, որ Հանրապետության Նախագահն ունի վարչապետին ազատելու հայեցողական լիազորություն, Սահմանադրությունը ելնում է կառավարության նկատմամբ Հանրապետության Նախագահի գերակա դիրքից, ինչը, սակայն, չի երաշխավորում գործադիր իշխանության միասնական և համաձայնեցված գործունեությունն այն դեպքում, եթե խորհրդարանական մեծամասնությունն ընդդիմադիր է Հանրապետության Նախագահին: Գործադիր իշխանության երկատվածությունն Արցախի պայմաններում առավել վտանգավոր է՝ հաշվի առնելով, որ պաշտպանության բնագավառում ևս Հանրապետության Նախագահը կառավարության հետ սերտ համագործակցության կարիք ունի, իսկ Արցախի Հանրապետությունը գտնվում է պերմանենտ պատերազմի վտանգի տակ:

Նախագահի գերակա դերը բացահայտ է նաև Ազգային ժողովի հետ հարաբերություններում: Վերը շարադրվածն ակնհայտ է դարձնում, որ Հանրապետության Նախագահը կարող է հասնել Ազգային ժողովի արձակմանը, իսկ Ազգային ժողովը, արձակվելու վտանգը զգալով, կարող է հաստատել իր վստահությունը չվայելող վարչապետին, որը իր մեջ կառավարական ճգնաժամի մեծ վտանգ է պարունակում. Վարչապետը, չունենալով պառակնետի աջակցությունը, չի կարող իրականացնել իր ծրագիրը, իսկ Հանրապետության Նախագահն էլ այդ դեպքում այլևս չի կարող արձակել Ազգային ժողովը:

Հարկ է ևս մեկ անգամ ուշադրություն հրավիրել այն հանգանակը վրա, որ ինչպես բոլոր կիսանախագահական կառավարման համակարգերում, Ազգային ժողովի կողմից Հանրապետության Նախագահի պաշտոնանկության իրավունքը կարող է իրականացնել միայն ինպահպանությունուն: Արցախի Հանրապետությունը Հանրապետության Նախագահին քաղաքական պատասխանատվության կանչելուն: Արցախի Հանրապետությունը Հանրապետության Նախագահը քաղաքական պատասխանատվություն չի կրում պառակնետի առջև, այսինքն՝ պառակնետը որևէ մեծամասնությամբ չի կարող անվստահություն հայտնել Հան-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րապետության Նախագահին: Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու միակ ճանապարհն իմաստն է, որը սահմանված է ԼՂՀ Սահմանադրության 71-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար»: Այս պարագայում կարող է ստեղծվել մի իրավիճակ, եթե կառավարությունը, չունենալով խորհրդարանի իրական աջակցություն, շարունակում է պաշտոնավարել, բայց չի կարողանում իրականացնել իր ծրագրերը, հատկապես, եթե խոսքը վերաբերում է կառավարության գործունեության ծրագրի իրականացման համար անհրաժեշտ օրենքների ընդունմանը:

Այսպիսով՝ կարելի է եզրահանգել, որ Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կառավարման համակարգը չի ապահովում միասնական գործադիր իշխանություն, խախտված է լիազորություն-պատասխանատվություն հարաբերակցությունը, այն կոնֆլիկտածին է, առկա չէ զսպումների և հակակշիռների արդյունավետ մեխանիզմ:

Հնարավոր համակեցության իրավիճակները արտակարգ պայմաններում գտնվող Արցախի համար կարող են ունենալ անցանկայի բացասական հետևանքներ, հանգեցնել ներքին բախումների, շամանակարգված գործողությունների և այլն:

Ընդհանուր առմամբ Արցախի գործող կառավարման համակարգին բնորոշ են Հայաստանի Հանրապետության 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ, ինչպես նաև ԱՊՀ մի շարք երկրների սահմանադրություններով ամրագրված կառավարման ձևերի հիմնական թերությունները, որոնք արտակարգ իրավիճակների պայմաններում առավել ցցուն դրսնորում են ունենում:

**Կիսանախագահական համակարգի հնարավոր բարեփոխումները**

Արցախի Հանրապետության կառավարման ձևի հնարավոր բարեփոխումներից մեկը կարող է լինել գործող կիսանախագահական համակարգի արդիականացումը: Այդ դեպքում անհրաժեշտ կիսանի Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրություններն անցկացնել միաժամանակ կամ շատ մոտ ժամկետներում՝ հնարավորինս խուսափելով համակեցության առաջացման բացասական հետևանքներից, հանելով Հանրապետության Նախագահի կողմից վարչապետին աշխատանքից ազատելու լիազորությունը, որևէ փուլում վարչապետ ընտրելու լիազորությունը փոխանցելով Ազգային ժողովին և այլն: Հաշվի առնելով, որ ՀՀ և ԼՂՀ կառավարման համակարգերը բովանդակային առումով բավականին մոտ են, ուստի խնդիրը

ները ևս նոյն են: Կիսանախագահական համակարգի հնարավոր բարեփոխումները մոտ են այն հարցադրումներին, որոնք արված են ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում<sup>6</sup>:

Սակայն այդ փոփոխությունները կատարելու դեպքում էլ, ինչպես և կիսանախագահական կառավարման համակարգ ունեցող շատ պետություններում, Արցախում ևս լիարժեք չեն երաշխավորվում հետևյալ խնդիրների լուծումները.

1. գործադիր իշխանության համակարգային անբողականության երաշխավորումը.

2. քաղաքական մենիշխանության հաղթահարումը.

3. պետական իշխանության գերանձնավորման հնարավորության բացառումը՝ սուբյեկտիվիզմի տարաբնույթը դրսնորումներով հանդերձ.

4. այն մոտեցումները, որոնք առաջարկվում են կիսանախագահական կառավարման համակարգի պայմաններում Նախագահի՝ խորհրդարանական մեծամասնություն չունենալով դեպքում հնարավոր հակամարտությունների հաղթահարման և անհրաժեշտ կայունության պահովման համար, խնդրի լիարժեք լուծում չեն երաշխավորում:

**Հնարավոր անցումը կառավարման խորհրդարանական համակարգին**

Կիսանախագահական համակարգի խնդիրների լուծման ուղիներից մեկը կարող է լինել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, Արցախի Հանրապետությունում ևս, կիսանախագահական համակարգի խորհրդարանականին անցում կատարելը: Առաջին հայացքից այս մոտեցումը բավականին տրամարանական ու հիմնավորված կարելի է համարել: Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության իրավական համակարգերն ու օրենսդրություններ բավականին մոտ են, խնդիրները՝ գրեթե նոյնական, ուստի մեկ երկրում խնդիրների լուծման բանալին կարող է արդյունավետ գործել նաև մյուսում<sup>7</sup>:

Սակայն, հաշվի առնելով մի շարք հաճախանքներ՝ խորհրդարանական կառավարման համակարգն այս փուլում, թերևս, այնքան էլ ընդունելի չէ Արցախի Հանրապետության համար:

Առաջին հերթին դա պայմանավորված է խորհրդարանական համակարգին բնորոշ գործադիր իշխանության անկայունությամբ: Եթեկու տասնամյակից ավելի ռազմական դրության ռեժիմում գտնվող պետության համար նման անկայունությունը անընդունելի է: Ֆիքսված ժամկետով Հանրապետության Նախագահի ընտրությունը փաստացի լայն համախմբում է ստեղծում վերջինիս շուրջը, ինչը կարևոր հանգամանք է Արցախի Հանրապետության համար: Այս դեպքում քաղաքական ուժերը գերծ են մնում ներքին հակասությունները

խորացնելուց, միմյանց հակադրվելուց, քանի որ ժամանակի կոնկրետ հատվածում անհմաստ է, և առկա է Նախագահ, որը հարթում է այդ հակասությունները:

Երկրորդ հանգամանքը պայմանավորված է Նախագահի ուժեղ դերով: Կառավարման պառամենտական համակարգն իր բոլոր առավելություններով հանդերձ գործադրի իշխանության դեկավար է դարձնում ոչ թե առաջնային մանդատով օժտված ու ողջ ժողովրդին ներկայացնող Հանրապետության Նախագահին, այլ քաղաքական ուժերի մի հատվածին ներկայացնող վարչապետին:

Արցախի Հանրապետության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ ազգային միասնության խորհրդանիշ հանդիսացող Նախագահը օվերատիվ կառավարման, ռազմական դրույթյան պայմաններում, պատերազմական գործողությունների ժամանակ շատ ավելի արդյունավետ կարող է գործել:

#### **Անցումը հավասարակշռված նախագահական կառավարման համակարգի**

Արցախի Հանրապետության առջև ծառացած մարտահրավերները պահանջում են ուժեղ և միասնական գործադրի իշխանություն, որն ի վիճակի կինքի ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական պայմաններում համախմբել պետության բոլոր միջոցները և օվերատիվ կերպով արձագանքել ստեղծված իրավիճակի պահանջներին: Այդ իսկ պատճառով Արցախի Հանրապետության դեպքում էականորեն կարևորվում է գործադրի իշխանության կայունության հարցը:

Նման կայունությունը չեն կարող երաշխավորել կիսանախագահական համակարգը և առավել ևս՝ կառավարման խորհրդարանական համակարգը, քանի որ Արցախի պայմաններում, հաշվի առնելով Ազգային ժողովի փոքրաթիվ կազմը, կայուն մեծամասնության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության բարեփոխված Սահմանադրությունում ամրագրված դրույթները կիրարենի չեն:

Սակայն կայունությունը գերիսնդիր լինել չի կարող. կառավարման համակարգը առնվազն պետք է լինի արդյունավետ, զերծ ներքին հակասություններից, ունենա զսպումների և հակակշռների արդյունավետ համակարգ, ապահովի պառլամենտարիզմի բարձր մակարդակ, երաշխավորի դատական իշխանության անկախությունը: Գործադրի իշխանությունն իր քաղաքականությունն իրականացնելիս պետք է մեծապես հաշվի նստի խորհրդարանական մեծամասնության քաղաքական կամքի հետ: Ուստի Արցախի Հանրապետության համար նախընտրելի է կառավարման այնպիսի համակարգ, որը, իհմնված լինելով կառավարման նախագահական համակարգի հիմնական

սկզբունքների վրա, այդուհանդերձ կարևորի նաև պառամենտական հակակշռների գործուն դերակատարությունը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Արցախի սահմանադրական փոփոխությունների պարագայում կառավարման համակարգը կարող է ունենալ հետևյալ հատկանիշները.

1. Հանրապետության Նախագահը գործադրի իշխանության դեկավարն է:

2. Հանրապետության Նախագահն ուղակիորեն ընտրվում է ժողովրդի կողմից:

3. Հանրապետության Նախագահն արտախորհրդարանական եղանակով ձևավորում է գործադրի իշխանությունը և հանդիսանում է գործադրի իշխանության դեկավարը:

4. Հանրապետության Նախագահը՝ որպես գործադրի իշխանության դեկավար, ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև:

5. Նախագահը կարող է արձակել Ազգային ժողովը:

6. Նախագահին անվստահություն հայտնելու, ինչպես նաև Ազգային ժողովը արձակելու պարագայում միաժամանակ անցկացվում են Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրություններ:

Հանրապետության Նախագահի թեկնածություններ կարող են առաջադրվել միայն խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից:

Նման համակարգի սկզբունքային առավելությունն այն է, որ գործադրի իշխանության ընտրության հարցը, ինչպես նախագահական համակարգում, լուծում է ժողովուրդը, այլ ոչ թե կուսակցությունները, երբեմն էլ՝ հետկույթիսան քանակցությունների ընթացքում:

Սուածարկող համակարգն ունակ է նաև լուծելու այնպիսի մի խնդիր, որն առաջանում է նախագահական կառավարման համակարգերում և դրա շրջանակներում գրեթե անլուծելի է. դա Հանրապետության Նախագահի և վերջինիս հակադրի պառլամենտական մեծամասնության միջև հակամարտությունն է: Սուածարկող համակարգում, հաշվի առնելով, որ երկու կողմերն էլ ունեն միմյանց լիազորությունները դադարեցնելու լիազորություն, բայց միայն սեփական լիազորությունները վայր դնելով գնով, հակադրի մեծամասնությունների խնդիրը կարող է լուծվել անվստահության քեի կամ պառամենտի լուծարման միջոցով:

Այս համակարգը մի կողմից կապահովի արդյունավետ հակակշռներ, զերծ կպահի կառավարման համակարգը փակույային իրավիճակներում հայտնվելուց, իսկ մյուս կողմից, հաշվի առնելով միմյանց անվստահություն հայտնելու արդյունքում երկու մարմինների նոր ընտրություններ անցկաց-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նելու պահանջը կստիպի, որ և Հանրապետության Նախագահը, և խորհրդարանը ծայրահետ անհրաժեշտության դեպքում միայն դիմեն միմյանց լիազորությունները դադարեցնելու քայլին: Դրանով կառավարման համակարգը կլինի ավելի կայուն:

Ի տարբերություն գործող համակարգի՝ այս համակարգի պարագայում էականորեն բարձրանում է Ազգային ժողովի դերը, քանի որ պառալամենտը ստանում է ոչ թե գործադիր իշխանության մի մասին՝ կառավարությանն անվտահություն հայտնելու լիազորություն, այլ ողջ գործադիր իշխանությանը:

Քաղաքական պատասխանատվության տեսակետից այս համակարգն անհամենատ գերազանցում է կիսանախագահականին, քանի որ Հանրապետության Նախագահը, ի տարբերություն դասական նախագահական և կիսանախագահական երկրների նախագահի, իր ամրող պաշտոնավարման ընթացքում գործադիր իշխանության համար քաղաքական պատասխանատվություն է կրում պառալամենտի առջև: Թեև Հանրապետության Նախագահն առաջարկվող համակարգում օժտված է մեծ իշխանությամբ, այնուամենայնիվ նա ամենազոր չէ: Դասական նախագահական համակարգերում մեծ է վտանգը, որ ընտրված նախագահը կարող է աստիճանաբար հեռանալ իր կուսակցությունից և առավելաբես միանձնյա որոշումներ կայացնել: Նա իր կուսակցության մեծ աջակցության անհրաժեշտությունը չունի, չունի նաև վտանգ, որ այդօրինակ քաղաքականության պարագայում կարող է կորցնել իր պաշտոնը: Նա չի կարող կառավարել պառլամենտական մեծամասնության կամքին հակառակ, այլապես պառամենտը կարող է նրան անվտահություն հայտնել:

Ազգային ժողովի դիրքերն այստեղ ավելի ամուր են, քան կիսանախագահական համակարգում, քանի որ լուծարելով պառալամենտը՝ Հանրապետության Նախագահը վայր է դնում իր մանդատը, մինչդեռ կիսանախագահական երկրի նախագահի պաշտոնավարման համար դա որևէ խոչընդոտ չէ:

Ժողովուրդը կառավարման այս համակարգում ավելի անմիջական ազդեցություն կարող է ունենալ կառավարման վրա, քան կիսանախագահական համակարգում: Ժողովուրդի կողմից ընտրված Հանրապետության Նախագահը ստանում է ժողովուրդի մանդատը՝ իրագործելու իր առաջարկած քաղաքականությունը: Կիսանախագահական համակարգում այս մոդելին հասուն գործադիր իշխանության երկրենության պատճառով վարչապետի ընտրությունը կատարվում է Հանրապետության Նախագահի կողմից, քանի դեռ նա մեծամասնություն ունի խորհրդարանում, կամ ընտրիմադիր կուսակցությունների կողմից, եթե նրանք, հաղթելով խորհրդարանական ընտրություններում, մեծա-

մասնություն են դառնում («համակեցություն»): Վարչապետը առաջին դեպքում երկրորդ մարդն է գործադիր իշխանությունում, իսկ երկրորդ դեպքում՝ առաջինը: Երկու դեպքում էլ առաջարկվող կառավարման համակարգը ենթադրում է գործադիր իշխանության վրա ժողովրդի անմիջական ազդեցության նվազում:

Ել ավելի մեծ են առաջարկվող համակարգի առավելությունները կառավարելիության ու կառավարման արդյունավետության տեսակետից: Ուղղակիորեն ընտրված Հանրապետության Նախագահն ունի անվիճելի լեզվափոխություն, որը ոչ պակաս է, քան խորհրդարանինը: Հանրապետության նախագահի հնարավորությունները՝ իրագործելու իր քաղաքականությունը, ավելի մեծ են, քան խորհրդարանական կամ կիսանախագահական համակարգերում:

Այս համակարգի հաջորդ առավելությունը պետական համակարգի օպտիմալացումն է: Այս համակարգը ենթադրում է վարչապետի պաշտոնի բացակայություն, ինչպես նաև մի շաբթ լիազորությունների կրկնության բացառում, որոնք առկա են կիսանախագահական համակարգում կառավարությունում և նախագահի աշխատակազմում:

Առաջարկվող համակարգի հաջորդ առավելությունը դասական նախագահականի, որոշ դեպքերում նաև կիսանախագահականի համեմատ այն է, որ Հանրապետության Նախագահի և խորհրդարանի ընտրությունների միաժամանակյա անցկացումը վերացնում կամ էականորեն մեղմում է նախագահական և կիսանախագահական համակարգին բնորոշ «հաղթողը ստանում է ամեն ինչ» սկզբունքը: Նախագահական ընտրություններում երկրորդ տեղ գրադեցրած թեկնածուն, որպես կանոն, երկրորդ ուժը կլինի նաև պառալամենտում:

### Առաջարկվող կառավարման ձևի ակունքները

Այս համակարգի գաղափարն առաջացել է Ֆրանսիական Չորրորդ Հանրապետությունում, որի խորհրդարանական համակարգում կառավարական ճգնաժամերը խրոնիկ երևույթ էին դարձել: 1955թ. աշնանից ֆրանսիացի ականավոր սահմանադրագետ Ժորժ Վեդելը, որն իր քաղաքական հայացքներով մոտ էր ծախերի ճամբարին, իսկական քարոզարշավ սկսեց Ֆրանսիայում խորհրդարանականից նախագահական կառավարման ձևի անցնելու օգտին: Իր առաջարկները նա ավելի ամբողջական տեսքով ներկայացրեց 1956թ. մայիսին: Մինչ այդ ծախ ուժերին մոտ կանգնած մեկ այլ ականավոր սահմանադրագետ Սորիս Դյուվերժեն 1956թ. ապրիլին «Լը Մոնդ» օրաթերթում հանդիսավոր էր եկել «Ժամանակակից խորհրդարանական համակարգին» անցում կատարելու օգտին՝ առաջարկելով վարչապետի ուղղակի ընտրություն: Եր-

կու պյովեսորների առաջարկները ունեին երկու ընդհանուր գիծ: Երկուսն էլ առաջարկում էին գործադրի իշխանության ղեկավարի ուղղակի ընտրություն, մի դեպքում՝ Հանրապետության նախագահ (Ժ. Վեդել), իսկ մյուս դեպքում՝ վարչապետի (Մ. Դյուվերժեն): Երկու առաջարկներն էլ նախատեսում էին, որ գործադրի իշխանության ղեկավարի կողմից պառամենտի լուծարումը կամ պառամենտի կողմից անվատահության հայտնումը գործադրի իշխանության ղեկավարին հանգեցնում են պառամենտի և գործադրի իշխանության ղեկավարի միաժամանակյա ընտրության: Այն բանից հետո, եթք ալժիրյան ճգնաժամի արդյունքում դր Գոյլ իշխանության գալուց հետո շատ արագ մշակվեց և ընդունվեց 1958թ. սահմանադրությունը և անցում կատարվեց Ֆրանսիական Հինգերորդ Հանրապետությանը, Մ. Դյուվերժեն ևս որդեգրեց նախագահի ընտրության գաղափարը և համապատասխան ձևափոխումներ կատարեց իր՝ 1956թ. առաջարկում<sup>1</sup>: Եթք 1962թ. աշնանը ըննարկվում էր Հանրապետության նախագահի ուղղակի ընտրության առաջարկը, որն ընդունվեց 1962թ. հոկտեմբերի սահմանադրական հանրաքենով, ֆրանսիական ճախ մտավորականների «Ժան Մուլեն» ակումբը, որի անդամներ էին և՝ Վեդելը և՝ Դյուվերժեն, ընդունեց մի փաստարուղը, որն առաջարկում էր նախագահի ուղղակի ընտրությունից զատ վերացնել վարչապետի պաշտոնը՝ Հանրապետության նախագահին դարձնելով գործադրի իշխանության ղեկավար, ինչպես նաև վերացնել Հանրապետության նախագահի կողմից պառամենտը լուծարելու իրա-

վունքը՝ առանց վայր դնելու սեփական մանդատը: Այդ փաստաթղթում նշվում էր, որ ցանկալի է նախատեսել այն բանի հնարավորությունը, որ երկու իշխանություններն էլ հնարավորություն ունենան որոշել դադարեցնելու միջանց լիազորությունները՝ գնալով միաժամանակյա ընտրությունները<sup>2</sup>:

Ժ. Վեդելը նման հնարավորությունը 1956թ. սկսած նախատեսում էր բացառիկ հանգամանքների համար՝ հույս ունենալով, որ նման դեպքեր չեն պատահի: 1964թ. նա ընդգծում էր, որ երկու իշխանությունների կողմից միևնույն գեներին տիրապետելը կհանգեցնի միջանց հետ հարաբերություններում համբերատարության, ողջախոհության և հաշտարարության, իսկ եթե առաջանան անհաղթահարելի հակամարտություններ, ապա դրանք կլուծվեն ընտրական կորպուսի կողմից հնարավորինս հստակ պայմանների պարագայում<sup>3</sup>: Ժ. Վեդելը կրկնեց իր նախընտրությունը 1992թ. Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից կազմակերպված կոնֆերանսի ժամանակ իր զեկույցում՝ մեկ անգամ ևս ընդգծելով, որ իր առաջարկած համակարգում յուրաքանչյուր իշխանության ճյուղ կվարանի հարցականի տակ դնել իր սեփական գյուրյունը և կնախընտրի փոխազդումների ճանապարհով լուծելու իրենց միջև գոյություն ունեցող տարածայնությունները<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Արցախի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր: Հասովկ թողարկում N 28(37), 10 նոյեմբեր 2006թ.:  
<sup>2</sup> Կիսանախագահական համակարգի ընդունումը, մասնավորապես, տե՛ս Duverger M. A New Political System Model: Semi-Presidential Government: Հղումը՝ <http://onlinelibrary.wiley.com/doi/10.1111/j.1475-6765.1980.tb00569.x/abstract/>:

<sup>3</sup> Տե՛ս Արցախի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր: Հասովկ թողարկում N 28(37), 10 նոյեմբեր 2006թ.:  
<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում:  
<sup>6</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, Տիգրան Մեծ, 2014թ., էջեր 46-47:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, էջեր 48-52:  
<sup>8</sup> Տե՛ս G. Vedel, Libérer l'executif, sinon, organiser les partis, in: Federation, August/September 1955, էջ 499:

<sup>9</sup> Տե՛ս G. Vedel, L'instabilité gouvernementale, Revue Banque et Bourse, mai 1956, էջեր 4-19:  
<sup>10</sup> Տե՛ս M. Duverger, Le Monde, 12 et 13 avril 1956: M. Duverger, Demain, la République, Paris, 1958:

## ԱՐԴԻՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

<sup>11</sup> Sté M. Duverger, *La VI République et le Régime présidentiel*, Paris, 1961:

<sup>12</sup> Sté Bulletin du Club Jean Moulin, «L'heure du Parlement», 33, juin-juillet, 1962:

<sup>13</sup> Sté G. Vedel, *Vers le régime présidentiel?* Revue française de science politique, vol. XIV, N° 1, février 1964, t. 31:

<sup>14</sup> Sté Fundamental legal options (report by G. Vedel) in Constitution-making as an instrument of democratic transition (Science and Technique of Democracy N° 3) (1993):

Грайр Товмасян

Руководитель - генеральный секретарь аппарата НС РА,  
кандидат юридических наук, доцент,  
докторант академии государственного управления РА

Вардан Погосян

Магистр политологии,  
руководитель правовой программы НМОС в Армении

### РЕЗЮМЕ

#### *Дефекты системы правления Республики Аrtsakh, возможные виды реформ формы правления*

В статье уделяется внимание в настоящее время существующей полупрезидентской системе правления в Республике Аartsakh, говорится о ее возможных опасностях. Автор рассматривает 3 версии решения задачи:

- 1) возможные реформы в полупрезидентской системе,
- 2) возможный переход к парламентской системе правления,
- 3) переход к сбалансированной президентской системе правления.

**Ключевые слова:** Республика Аartsakh, система полупрезидентского правления, система парламентского правления, сбалансированная президентская система правления, Президент Республики, Национальное Собрание, премьер-министр, правительство.

Hrayr Tovmasyan

The RA NA Chief of Staff - Secretary General,  
PHD in Law, Associate Professor,  
Postdoctoral Researcher of the Public Administration Academy of RA

Vardan Poghosyan

Master's in political science,  
Head of the GIZ Legal Programme in Armenia

### SUMMARY

#### *Disadvantages of the governmental system of the Republic of Artsakh, the possible ways of the reforms of the governmental system*

The article refers to nowadays currently existing the semi-presidential system of government of the Republic of Artsakh, talks about its possible dangers.

The author considers 3 solutions of the problem:

- 1) possible reforms of the semi-presidential system,
- 2) possible transition to a parliamentary system of government,
- 3) the transition to the presidential balanced system of government.

**Keywords:** the Republic of Artsakh, semi-presidential system of government, parliamentary system of government, presidential balanced system of government, the President, National Assembly, prime minister, government.